



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

✓ 292

ՊԵՏԱԿԱՆԹԻՒՅ

ԱՅԱՑ, ԱԾԽՈՒՅ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄՐՅՈՅ ԳՐԻԳՈՐԻՅ 1999

ՎԱԼԵՐԻՅ ԿԵՐՈՎ ՀԱՅԻ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բ. ԲԱՇԱԹՐՅԱՆ

(Հանդել է 10 երրորդ տեղական շնորհական 1859 ամ)

— թիվը —

Ltn
292

Դ ՄՈՒՐՅՈՅ

Դ ՑԱՐԻԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԵՄԱՐԻ ԱՐԵՒԵԼԻ ԼԵԶՈՒՆ

1859

НЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

С. Петербургъ, 16 Іюня 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.

(Изъ 10-й книжки «Литературнаго Сборника» за 1859 годъ).

28.295

4 292-а

Արքոյն Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսի կենաց, Նշխարաց և
եկեղեցւոյ պատմութիւնը՝ որ այժմ առանձին տետրակով՝ ի լոյս է
ընծայւում՝ հանուած է ՚ի 1859 ամի Ճռաքաղի 10 Երորդ Տետ-
րակի միջէն, և զընթերցողքը տեղեկացուցանելոյ համար հանգամա-
նաց գործոյն՝ բաւական եմ համարում՝ ի մէջ բերել այս տեղ զհե-
ղինակի առ մեզ գրեալ նամակի օրինակը քաղուածօրէն, որ տպուած
է նախայիշևալ տետրակի Տարեդրէ մէջ ըստ այսմ.

… « Հազում անգամ, գրիչք հայրենասէրք փութան յօրագիրս
և ՚ի լրագիրս ազգիս՝ ՚ի գեր գրոշմել զնշխարս հնութեանց և ըզ-
նորանոր դէպս Հայաստան աշխարհի, նա մանաւանդ արևմտեայ վար-
դապետք՝ որք զմերոց կողմանցս աղօտ ունելով տեղեկութիւն՝ յոր-
դորեն և զայլս՝ ՚ի նոյն ձեռնամուխ լինել։ Յայսպիսի խրախուսա-
նաց քաջալերեալ բազումք՝ ՚ի կողմանց կողմանց՝ արդիւնաւոր հան-
դիսացան . . . :

« Յորչափ գիտնականք և առաւել բանիբունք յանիոյթ յայս-
պիսիս կայցեն, թերևս համարձակութիւն լիցի թերակատար վարժե-
լոց, որպէս մէքս եմք, յայսպիսիս ձեռնամլիլ՝ ՚ի գործս։ Եւ ահա

Հրամանք յարգելեաց և խրախոյս սիրելեաց պարտապան զիս յայսմ
կացուցին, թէպէտ և ոչ սակաւ խոշընդուն ունիմ ձեռնարկութեանս
զիմս բաղմաղբաղ վիճակ։

«Օ մանրամասն պատմութիւն երկրորդ գիւտոյ նշխարաց Սրբոյն
Քրիդորիսի ՚ի վաղուց պատրաստեալ էի՛ ճառելով միանգամայն զկե-
նաց նորա և զնահատակութենէ, զառաջնոյ գիւտոյ նշխարացն, և զե-
րիցս շինութենէ եկեղեցւոյն՝ հանդերձ ծանօթութեամբ, այլ մնայի
ցարդ՝ ցանկանալով տեսանել զայն ՚ի հմուտ և ՚ի կատարեալ գրչէ
յերեան եկեալ։ Եւ զի յամաց հետէ յուսախար գտայ, համարձա-
կիմ զնոյն իսկ զգրուածս իմ առաքել առ ձեղ և խնդրել՝ զի հա-
ճեսջիք ՚ի լոյս հանել ՚ի պատուական ամսագրիդ, չնայելով յանա-
զողակ շարագրածս, այլ միտ եղեալ միայն ճառելոցն ՚ի սմա ստու-
գագիր պատմութեանց և անցից իրացն՝ որոց եղէ ես ականատես...»։

ՊԵՏԱԿԱՆԻ

ԿԵՆԱՑ, ՆՇԽԱՐԱՑ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄՐՅՈՑՆ ԳՐԻՎԱՐԴՈՒՄ ԵՎ ԱՌԵԿԵՑ ԿԵԹՈԳ ՀԿԱՍՄ

Ը.

Ական + և Կահապահութեան Արքոյն Գրիգորէսէ :

Ո՞ւծին Գրիգորի Լուսաւորչին մերոյ համբաւ սրբութեան և առաքելաշնորհ վարուցն տարածեալ ընդ ամենայն տշխարհ Եղուանից՝ ցանկացան իշխանք տշխարհին ունել ինքեանց Կաթողիկոս՝ ի սերնդոց նորին զԳրիգորիս՝ զպատանեակն Աղղոմօնասարաս՝ զորդի Արքոյն Արթանիսի որդւոյ մեծին Գրիգորի երկրորդ Լուսաւորչի¹ ձայոց և Եղուանից՝ Առ այս՝ միջնորդեալ Աանատրկոյ իշխանին Փայտակարանի² առ Տրդատ արքայ ձայոց՝ հաճեաց զկամն նորա՝ կատարել ըզինդիր նոցին. և նա ետ ձեռնադրել և առաքել յԵղուանս զպատանեակն Գրիգորիս ընդ Աանատրկոյ իշխանին Փայտակարանի յամի Տեառն 340: Արոյ եկեալ յԵղուանս՝ ունելով և ընդ իւր՝ ի մասանց Արքոյն Պանդալէոնի և յարենէ Օաքարիայ հօր Յովհաննու Մկրտչին՝ առաքելական շնորհօք փոյթկալու այցելութեամբ շրջել յամենայն՝ ի վիճակս իւր—զնըմանութիւն հաւուն յանձին բերեալ—հաստատել զժողովուրդ իւր երկնաշնորհ քարոզութեամբն՝ ի վարս բարեպաշտութեան

ըստ Գրիտոսական օրինաց՝ յամենայնի տալով ամենեցուն օրինակ զանձինն սրբութիւն։ Իսկ ՚ի միջի անհաւատացեալ ժողովրդոց անդը ևս քան զսահման վիճակի իւրոյ՝ առաքելաշնորհ ընթացիւք և բազում հրաշագործութեամբ զղիցական մնութիապաշտութեան զխաւարին հալածէր՝ ծագելով՝ ՚ի նոսա զլոյս Գրիտոսական հաւատոյ, և վերածնեալ զնոսա յորդեգրութիւն չօրին երկնաւորի։ և ընդ բազումն՝ ՚ի բնակչաց աշխարհին՝ էած յԱստուածգիտութիւն և զորդին Աննեսանայ Մասքութաց արքային՝ զՄովսէս, զԴանիէլ և զԵղիա։

Ընդ այսպիսի քարոզութիւնս և ընդ դարձ բազմաց ժողովրդոց և որդւոց արքային՝ ՚ի սկզբան անդ չեին դժկամակ իշխանիք Մասքութաց և Երշակունի արքայն Աննեսան, նա մանաւանդ՝ հածեալ էր արքայ ընդ վարս սրբութեան ազգակցին իւրոյ Պահլաւունոյ Արքոյն Գրիգորիսի։ այլ որպէս թուի՝ շարանախանն Շապհոյ³ արքայի Պարսից ցաւեալ՝ ՚ի սիրո՝ ոչ այնքան ընդ քրիստոնէութիւն Մասքութաց, որքան ընդ հաւատակցութիւն նոցա ընդ Տրդատայ արքային չայոց։ վասն որոյ և հրապուրեալ զԱննատրուկ իշխան Փայտակարանի յուսով թագաւորութեան՝ ջանայ ՚ի ձեռն նորա կասկածելի ցուցանել արքային և իշխանացն Մասքութաց զքարողութիւն Արքոյն Գրիգորիսի։ Ընդ այն ժամանակս մեռանի արքոյն չայոց Ուրբին Տրդատ՝ թերեւս ըստ սաղրանաց Շապհոյ և Աննատրիոյ՝ յիշխանաց չայոց թունաւորեալ։ և ծերունին Ուռնայր⁴ երանելի արքայն Եղուանից չէր՝ ՚ի միջի։ Ա ան որոյ և Աննատրիոյ վտարանջեալ՝ ՚ի չայոց՝ յաջողեցաւ թագաւորել անտիրայելոյ Եղուանական աշխարհին՝ զողացեալ զկամս իշխանացն։ որով և ձեռնհաս եղե ոչ միայն կասկածելի՝ այլ և իբրև զլրաեսս չայոց՝ մահապարտ ցուցանել զՈւրբին Գրիգորիս առաջի արքային և իշխանացն Մասքութաց, զրգուելով և զնոսին ըստ կամաց Շապհոյ՝ յաւարառութիւն աշխարհին

Հայոց։ Եւ վասն զի երանելի որդիքն Անհետանայ և այլք բազումք հաւատացեալք չեն հածեալ բնաւ ընդ այսպիսի ձեռնարկութիւնս արքային և իշխանացն, և ջանային խափանել զեղեռն զայն, դատեցան իբրև զապստամբս յազդայնոյ զգացմանց և խորհրդակիցս Արքոյն Գրիգորիսի վասն որոյ և սպառնալիս մահու ընկալան անդէն, եթէ չդառնայցեն՝ի կուամոլութիւն։ Ընդ այս չհանդուրժեալ ընտրելոցն՝ խոյս ետուն իբրև 3870 անձինք յԱրցախ աշխարհ, որք և յետ ժամանակաց ընկալան վնահատակութիւն վասն անուան Քրիստոսի՝ի նոցին Վասքութականացն աղանց՝ի ճղնելն իւրեանց՝ի վերայ լերինն՝ որ Գիղափայտն⁵ կոչեցաւ։ Ապա՝ի պատիւ նոցին շինեցաւ անդ վկայարանն՝ Ատարոյ վանք կոչեցեալ։ Ընդ այն ժամանակս՝ յորժամ Ոուրբն Գրիգորիս դարձ արարեալ՝ի Վասքութացն դեգերէր քարոզութեամբ՝ի ծայրս աշխարհին ֆղբաց⁶։ Հասին առ նա արք՝ չարութեան թունիւք հրապուրեալք, և կալեալ կապեցին զՈուրբն յադի ամեհի ձիոյ, և վարելով՝ի քարուտս և՝ի թուփս՝ վախճանեալ նահատակեցին զերանելին յամի Տետոն 342, կամ ըստ այլոց 348,՝ի Վատնեան դաշտի, մերձ՝ի ծովն Կասպից՝ի դուռն Չորայ⁷։ Օայս տեսեալ երանելի սարկաւագունք Արքոյն՝ առին զմարմինն, և աճապարեալ հասին յԱրցախ⁸ աշխարհ Հայոց, և՝ի նորին դաւառի Վիւս Հաբանդ կամ Փոքր Ոիւնիք կոչեցեալ, Հանդուցին առեկեղեցւոյն⁹։ Ամաստրայ աւանի՝ հուպ՝ի բեմն՝ի հիւսիսոյ կողմանէ «(որսկէս զրէ պատմաբանն), ընդ նմին և զշեց արեան Օաքարիայի և զման նշխարաց Պանդալէոնի, և ինքեանք փախեան՝ի խորս Հայոց։

Բ.

Առաջին գիրք նշնչարաց Արբոյն Գրիգորիս:

Առաջան արքայ Աղուանից (յորոյ աւուրս գտաւ տեսլեամբ
'ի Յըրի քաղաքին ֆղբաց 'ի մասանց Արբոյն Օաքարիսյի և
Պանդալէոնի՝ 'ի Արբոյն Գրիգորիսէ յեկեղեցւոջ անդ ամփո-
փելոյ) ցանկացաւ զբարի ցանկութիւն՝ խնդիր առնել և նշխա-
րաց նորին Արբոյն Գրիգորիսի. և զի գիտէր 'ի հնագիտաց՝
թէ ամփոփեալ կայ առ եկեղեցւոյն Ամարասայ անյայտաբար,
հարցանէ ցերէց վանիցն Ամարասայ. և չառեալ նշան իսկական
տեղւոյ նշխարացն՝ խորհի բրել տալ զտեղին բոլոր. բայց և
առ բազմութեան գերեզմանացն՝ յուսահատի 'ի գտանելոյ ըզ-
ինդրեալն: Ապա յԱստուած ապաւինեալ՝ կոչէ զամենայն
դասս եկեղեցականաց յաւանն իւր 'ի Գուդական՝ որ առ Գըր-
դու գետով՝ խնդրել յԱստուծոյ հսկմամբ, պահօք, և միջնոր-
դութեամբ մասանց Արբոց առ ինքեամբ գտելոց՝ և մասանցն
Արբոց հռիփսիմեանց գտելոց առ Վատթէի երիցու. առաքէ
ապա և զՎատթէ երէց 'ի մայր եկեղեցին Աղուանից՝ որ 'ի
Գիս¹⁰, պատարազս մատուցանել անդ. ուր և ազդումն լինի
նմա և 'ի բանակի արքային այլեւ այլ անձանց. որովք յուսա-
ցեալ արքայ՝ չուէ սրբազն բանակաւն՝ թափորական պաշտա-
մամբ՝ դադար տուեալ զՃանապարհայն յԱրժանա գեղջ և 'ի
Քարուէջն աղարակի¹¹, յորս արքայի և այլոց երեւի տեսիլ
այլ և այլ օրինակաւ, իսկ Յովէլայ՝ դրանն սարկաւագի երե-
ւին արք ծերագոյնք, և Գրիգորիս՝ մանկագոյն, սպիտակա-
զգեստ, որ մատամբ ցուցեալ հրամացէր բրել զփափագեալ տե-
ղին: Այսպէս մեծահաւատ յուսով եկեալ հասանէ արքոյ յԱ-
մարաս՝ անցեալ ընդ գետակ նորին, և 'ի գեղջն Յըրոյ, և յա-
րեղայէ վանիցն լուեալ զմարգարէութիւն Յորայ ճղնաւորին

զինքենէ և զԱրբոյն Վարիգորիսէ, և զայլ բազում հրաշալիս,
սկսանի ինքնին պեղել զտեղին յայտնեալ. և թագուհիքն և
իշխանուհիք զհողն զգեստով իւրեանց՝ ի բաց տանին. ուրա-
նօր՝ ի յայտ զայ՝ ի խորս անդ զերեզման Արբոյն յամի Տեառն
489. յորմէ և ամենեքին ընանին խնդութեամբ։ Եւ ընդ բա-
նալ գերեզմանին՝ բուրեալ անընդել և աղնիւ անուշահոտու-
թեան՝ զմայլեցուցանէ զարբայ. որ և հարցեալ ցայլս՝ հաւաս-
տեաց զանուշահոտութեան զբուրումն առ բոլորեսին. ասէ
Պատմաբանն „, անընտելական իմն բուրեալ հոտ անուշից, մին-
չև ամենեքին՝ ի թմբրութեան լեալ ժամն բազում՝ ծածկե-
լով զյոլովիցն ինկարկութեանցն հոտ“. Եւ արդարեւ արժա-
նաւոր պարզեւ մարմնոյն սրբութեան՝ որ ճկնեցաւն և նահա-
տակեցաւ վասն սիրոյն Վարիստոսի։ պա առեալ արքայ զԱմար-
մինն՝ լուանայ անոյշ գինեաւ յոսկեայ մաղզմայի, տարածեալ
զարքունի վառն՝ ի վերայ գետնոյ. և առեալ՝ ի մասանցն ինքն՝
և որ ընդ իւրն էին¹², զմնացեալսն ամփոփէ՝ ի տեղւոջն՝ առ-
ժամն կառուցեալ մատուոն՝ ի վերայ։ Յետ ժամանակաց ինչ
անցանելոյ՝ կառոյց արքայ և տաճար հոյակապ յանուն Արբոյն,
և զնշխարսն եղեալ՝ ի միակտուր քարեայ տապանի՝ ամփո-
փեաց՝ ի հին տեղւոջն անյայտաբար յապահովութիւն յապառ-
նեաց. եղ զետեղել՝ ի մասանց Արբոյն նոյնպէս՝ ի քարեայ տա-
պանի և յայլեայլ նշանաւոր տեղիս եկեղեցւոյն (որպէս այժ-
մեան հանդամանքն ցուցանեն) վասն թագուն մնալոյ իսկական
տապանի և վասն ուխտաւորացն յաճախելոց անդր, ուր և ցայ-
սօր ժամանակի յաճախեն ուխտագնացք, և լինի բժշկութիւն
բազմաց ախտացելոց և անզաւակելոց։

¶.

¶. Անց + Եկեղեց-ոյն Ամարտուա:

Օ եկեղեցին որ յԱմարաս, զիտեմք նախ առաջին հիմ-
նարկեալ՝ ի մեծէն Գրիգորէ, այլ ոչ յաւարտ հասուցեալ,
զոր մերս Սուրբ Գրիգորիս՝ ի կատար ածեալ՝ օրհնեաց ըզ-
շինութիւնն—որ յետոյ պահարան եղեւ նշխարաց իւրոց: Վա-
չական՝ Աղուանից արքայ—որ ըստ թուոյ աւուրց տարւոյ
կանգնեաց զեկեղեցիս յԱղուանս — առ զիւտիւ նշխարացն՝
վասն զի չեր կանգուն եկեղեցին՝ ի Գրիգորիսէ շինեալ, ետ՝ ի
նորոյ կառուցանել՝ ի վերայ նախկին հիմանն տաճար հոյակապ
՝ ի պատիւ Որբոյն՝ երկնարերձ կաթուղիկէիւ՝ համայն սպիտակ
և սրբատաշ քարամբք: Եւ զայս եկեղեցի քակտեալ աւերեաց
ցյատակ՝ ի վերջ 14 դարու. թշնամին քրիստոնէից և մեծ բըռ-
նաւորն Ասիոյ՝ Լանկին թամուր: Յետ սատակման նորա՝ յեր-
կիւղէ թշնամեաց՝ ի սակաւ աւուրս հազիւ հազ կանգնեցին
զեկեղեցին շրջակայ բնակիչք տեղւոյն՝ ի վերայ կիսոյ երկարու-
թեան նախկին հիմանն՝ ի նոյն իսկ՝ ի քարանցն խորտակելոց՝
անարուեստա և տձեւս շարելով, բայց ամրակուռ՝ կրաշաղախ կա-
ռով: Եւ այն անշուք եկեղեցի տեւեաց ցմեր աւուրս:

Աէլիք Շահնաղար Հայկազն՝ իշխան գաւառակին Վա-
րանգու՝ կամելով՝ ի հիմանց նորոդ շինել զայս ուխտառեղի, և
հաստատել միաբանս՝ ի նմա, կանգնեաց յապահովութիւն՝ ի
վերջ 18 դարու նախ առաջին ամբոց քառակուսի զեկեղեցեաւն՝
ըրիւք աշտարակօք քարուկիրս և ամրակուռս, և՝ ի ներքս
պարսպին շուրջանակի սեղանատունս, խահանոցս, սենեակս և
ոյլ շինութիւնս՝ ի պէտս և՝ ի բնակութիւն միաբանից, որք և
ցարդ ամբողջութեամբ մնան: Այլ յաւարտիւ շինութեան
բիրդին՝ աւարտ եհաս և արեւու նորին՝ չեղեալ ձեռնհաս՝ ի
շինութիւն եկեղեցւոյն:

՚Ն տիրել հզօր աէրութեան Ռուսաց կողմանցս մերոց յամի Տեառն 1804, զխպրահիմ Խան Պարապաղու¹³ թողին յիւրում իշխանութեան ընդ հարկաւ՝ եղեալ զօրս՝ ի պահպանութիւն երկրին յասպատակութենէ Պարսից։ Յաւուրս Խանութեան Վեհտի Պուլի Խանին որդւոյ այսր Խպրահիմայ՝ զօրք Ռուսաց առ ժամանակ մի՝ ի բնակութիւն ինքեանց կալսն զբերդն Ամարասոյ Վանից։ Ոռքա անտեղեակ դոլով սրբութեան տեղւոյն՝ փոյթ ինչ ոչ տանէին՝ ի մաքրութեան ունել զայն։ Արոյ վասն՝ ի գիշերի միում երևեցաւ պահպանացն սպիտակաղղեսո փառաւոր այր անծանօթ, և՝ ի հարցանել ցնա պահպանացն կրկին և երեքկին՝ թէ ով իցէ, նա ոչինչ պատասխանեալ մտանէ, յեկեղեցին։ Բատ այսմ օրինակի երկի և այլոց յայլում գիշերի և մեծամեծացն իսկ։ Եւ յայնմ հետէ իբրի ստուգիւ ծանեան՝ ի Հայոց զարբութիւն տեղւոյն, սկսան արժանաւոր յարդանօք ունել զվայրն՝ ի մաքրութեան։

Եւ՝ ի 1832 ամի՝ ի հաստատիլ մաքսատան՝ ի սահմանակցութեան Պարսից՝ մաքսապետք Ռուսաց ըստ յարմար դրից կարաւանագնաց Ճանապարհորդաց՝ զբերդն Ամարասոյ արարին մաքսատուն։ Ազգաշին արքեպիսկոպոսն և մետրապոլիտն Աղուանից Տէր Բաղդասար Գալալեան՝ բազումն աշխատ եղեալ առ զաւառապետս՝ կուսակալս և փոխարքայս, եցոյց՝ ի պատմութեանց՝ թէ տեղին սրբոց է, և չէ պատշաճ՝ ի տուն մաքսից փոխել զայն։ որով և ետ փոխադրել զմաքսանոցն յայլաեղի՝ ի թուին 1847։ Յաւուրսն յայսոսիկ՝ մինչ զեռ յԵմարաս էր մաքսատուն՝ դէպ լինէր ինձ յոլովակի առ թիւ վաճառականութեան զնալ անդր, և իմովք իսկ աչօք զննել զայն։ Ընութիւն նախայիշեալ եկեղեցւոյն էր յայնժամ կիսաւեր, անշուք, խորայատակ, ունելով մանր լուսամուտս և կաթուղիւկէ սրածայր և անշուք։ մի և եթ դուռն ունէր յարեւմտից, ընդ որ ջուրք հեղեղաց բաղում անզամ յեկեղեցին՝ ի ներքս

զեղեալ լնուին։ Վահրք եկեղեցւոյն էր քառակուսի, յաջմէ և յահեկէ սեղանոյն ըստ ողիղ դժի կային երկու մեծադիր խորանք, զդիրս եկեղեցւոյն արտաքուստ լայն ցուցանելով՝ ի հիւսիս և ՚ի հարաւ քան զմիւս մասն նորին։ Երտաքուստ խորանացն յարեւմտից՝ էին կիսաբոլոր բեմք փոքրիկք՝ կից յորմունս եկեղեցւոյն։ ՚Ի ներքս եկեղեցւոյն էին երկու դրունք կամարակապք ընդ բեմիւ սեղանոյն՝ ՚ի հիւսիսոյ և ՚ի հարաւոյ։ Պուռան շիւսիսային խափանեալ էր, զեղեալ կայր անդ տապան քարեայ և միակտուր՝ եռանկիւնի կափարիչ՝ ՚ի վերայ, կիսով շափ տեսանելի ընդ կամարաւ դրանն և կիսով չափ ծածկեալ ընդ սալայտակաւ։ Աւխտաւորք աստի հող բժշկութեան առնուին։ Ընդ հարաւային դուռն լուսով ճրագի շրջապտոյա տանդղովք մտեալ՝ իջե՝ ՚ի կամարեայ վերապ խոր, յորում կայր տապան փոքրիկ՝ ՚ի միակտուր քարէ՝ հանդերձ եռանկիւնի կափարչաւ, և յարեւմտից կափարչին՝ քար կանգուն՝ կոփեալ թագածե, զուրկ յարձանագրութենէ։ Բաց յայսմանէ՝ այլ ինչ ոչ տեսանիւր յեկեղեցւոջ անդ։ միայն անարուեստ և անշուք շինութիւն որմոցն կամարաց և սեանց՝ հաստատեին զաւանդութիւնն վաղեմի յաղաղս շինեալն զոլոյ՝ ՚ի միում եօթնեկի։ Ծերդն Աէլիք Շահնազարայ, որպէս դրեցաք՝ ՚ի վեր անդը, կառուցեալ՝ ՚ի պէտս և ՚ի բնակութիւն միաբանից՝ զամենայն շինուածն ունի կամարակապ և ամրակուռ, և կայ կանգուն մինչեւ ցայսօր։

Դվախճանիւլ Աերսիսի Կաթողիկոսի՝ առաքեցաւ՝ ՚ի Ալբրագան Աիւնհողոսէն Լշմիածնի Տէր Գէորգ Աւեհապետեան Արքաղան Արքեպիսկոպոսն¹⁴ յԵռաջնորդութիւն Հայոց Եղուանից։ Հասեալ նորա՝ ՚ի Շուշի քաղաք՝ ՚ի 1857 ամի, յառուր տօնի գիւտի նշխարաց Արքոյն Վարիզորիսի¹⁵ հրաւիրեաց՝ ՚ի ճաշ զեշխանաւորս և զերեելիս յԵռաջնորդարան քաղաքիս, որ և յորդոր եղեւ ձեռն տու առատ տրօք շինութեան եկե-

զեցւոյ Արքոյն Գրիգորիսի որք և ջերմեռանդն ցանկութեամբ ստորագրեցին¹⁵՝ ի ժապաւինեալ տետրակի տուրս ըստ իւրաքանչիւրումն կարի՝ ՚ի շինութիւն և ՚ի պայծառութիւն եկեղեցւոյն։ Այսպէս և գիւղականքն բոլոր ստորագրեալք յայլում տետրակի, խրախոյս ետուն Արքազան Հովուապետին այսպիսի ըղձակաթ ընծայաբերութեամբք՝ քակել զհինն, և զնորն՝ ՚ի հիմանց շինել։

Դ.

Եցիցորդ գիւղ նշխարաց Արքոյն Գրիգորիսի, և որ ինչ յարակեց աղառմունիշներ ՚ի նոյն։

Այն ինչ ձեռն արկին վասն նորոգ շինութեան՝ քակել զպարիսպս եկեղեցւոյն՝ և հիմն փորել լայն քան զնախկին հիմն, զերիւք կողմամբք եկեղեցւոյն, ՚ի հինգ-կանգնեան խորութեան երեւեցաւ նշխար հնոց շինութեանցն (և խորագիտութիւն շինողացն՝ առ ՚ի անփորձ պահել զգանձն անգին), որ եկամուտ նիւթովք յաւուրց անտի ցմեր ժամանակս անյայտեալք էին։ Օայսցանէ պարա անձին վարկաւ միաբան Ամարաց՝ Կերսէս վարդապետ՝ զեկուցանել Արքազան Առաջնորդին։ Այլ զեւորին Արքազնութիւնն վշտակնեալ կայր յոտնացաւութենէ, առաքեաց զԳհերդ վարդապետն Արամեան՝ զհաւատարիմն յամենայնի՝ ՚ի զնին տեղեացն հնութեանց, և միանգամայն պատուէր տուեալ՝ ՚ի խնդիր լինել խական տապանի Արքոյն։ Գհերդ վարդապետն ՚ի զննելն ՚ի ներքս յեկեղեցւոջ՝ զայլ և այլ նշանաւոր տեղիս եղիտ՝ ՚ի վաղուց խորագոյն փորեալս, և ոչինչ՝ ՚ի նոսա զննեալ և զտապանն մեծ՝ որ առ հիւսիսային դրան վիրապին, ետես առ պատուանդանի խաչի կափարչին զրեալ անթիւ ։ Այս է պապան Արքոյն Գրիգորիսի Աղուանից Առնեալիսաիւ որոց տառք ունեին զնմանութիւն տա-

ոից ոչ հինաւուրց. և 'ի բառնալ զկափարիչն՝ տեսին 'ի նշմարմանէ ճարտարապետին զտեղի գործեացն 'ի վաղուց բարձելոց և զննելոց. որով անյոյս լեալ 'ի զտանելոյ զտեղի սուրբ նշխարացն՝ կրկին և կրկին դեգերի 'ի գրուածս Առվախի կաղկանտուացւոյն, և տեղեկացեալ թէ սարկաւագունք Արքոյն բերեալ զմարմինն հանդուցին առ եկեղեցւոյն Եմարասայ հուպ 'ի բեմն 'ի հիւսիսոյ կողմանէ, աստի գուշակէ զարտաքին փոքրիկ բեմն հիւսիսային. վասն որոյ պեղել տայ և անդ. այլ զի չէր հնար զքարինս սալոյատակացն՝ 'ի պատճառս արուեստայեռ զուգակցութեանցն՝ ողջամբ բառնալ, հրամայեաց խորտակել զայնս, և ապա ետ բըել զհողն. ուր և 'ի յայտ եկն 'ի 23 Վարիլի 1858 ամի իսկական տապան Արքոյն միակտուր քարեայ՝ եռանկիւնի կափարիչ 'ի վերայ, խաչ ազնուատիպ յարեւմտից կուսէ կափարչին՝ չունելով ինչ արձանագիր 'ի վերայ: Յայնժամ ծածկեալ զտապանն շուրջառաւ, և ամբացուցեալ կնքօք՝ արձակեաց աւետաւորս առ Արքազանն՝ 'ի յայսնել. աւետեաց և քաղաքիս՝ զանդակահարութեամբ զգիւտ նշխարաց Արքոյն Գրիգորիսի: «Եորին Արքազնութիւնն 'ի խնդութենէ սրտին ոչինչ համարեալ ըզիստատանջ ցաւ ոտնացաւոյն՝ փութացաւ զնալ ինքնին յԵմարաս: «Եոյնակէս և բազմութիւն քաղաքիս խրախացեալ բերկրութեամբ հոգւոյ՝ դիմեին է որ սայլիւք, է որ դրաստուք և է որ հետիւտս՝ 'ի համբոյր նշխարացն: Ընդ որս և իմ վաղվաղեալ հասի անդր. և այս է՝ զոր ինչ տեսի 'ի փլուածս անդ՝ հնութիւնս եկեղեցւոյն նախնւոյ շինութեան:

Ե խորութեան անդ երկեիւր ներքին և արտաքին հին յատակ եկեղեցւոյն. երեսք որմոցն առ յատակաւ եկեղեցւոյն հաւասարեալք էին սրբատաշ քարամբք, շուրջ զնովաւ որտաքուստ ածեալ երեք կարգ աստիճանաց յաղնուակոփ քարանց, զյատակաւ աստիճանացն շուրջանակի սալոյատակ սըր-

տառշաբամբք՝ աղխեալ արուեստայեռ զուգակցութեամբ։
Ելումնւտք դրանցն մնացեալք էին առ ’ի հիւսիսային և հա-
րաւային բեմից փոքունց արտաքնոց՝ և քարինք դրանցն կանգ-
նաչափ մնացեալք յորմունս ’ի վերայ նախկին հիման, և ըզ-
դրամբքն էին աղնուագիծ նկարէն քիւք պատշկամի, կիսաբո-
լոր մնաթոռով և սիւնակու կամարաց՝ զոր ստուգեցի ’ի քա-
րանց՝ որք դեռ ևս ’ի հիման և ընդ Փլատակու երեւէին։ Վ ի-
րապին երեք դրունք էին՝ երկու ’ի ներքուստ, և մի արտաքուստ
յարեւելից կուտէ՝ միով միով աստիճանաւ ’ի վերապն իջա-
նելի։ Յորմունս և ’ի կամարսն չե քակտեալս՝ էին երկու խաչ-
քարք, և առ պատուանդանի նոցին արձանք արանց՝ որոց տա-
րադ զգեստուց ’ի ծնկաց փոքր ինչ ’ի վայր երկարեալք, և
թիք ոչ առ կախեալք, զմիջովք ունելով կամարս ’ի դուրս
ուռուցեալ և յերեսս կապից կամարացն էին կիսաբոլոր նկա-
րէն զնտակք։ Եշին և ’ի վերայ քարանց արձանք երից արանց՝
նշմարեալք ըստ իմլք ’ի զգեստս եկեղեցականաց յաթոռ բաղ-
մելոց, ունելով ’ի դլուխս թագ փոքր ինչ այլատարագ՝ քան
զոր այժմեան եպիսկոպոսք ունին, որոց միջնոյն փոքրկութիւն
հասակին յուշ ածեր զպատանեկութիւն Արքոյն Գրիգորիսի,
որ կարկառեալ ուներ զձեռն աջոյ՝ առնուլ զկարկառեալն ’ի
միւսմէ զեր ինչ աննշան։ Ի ներքոյ արձանացս կայր արձանա-
գիր եղծեալ, յորում նշմարելի էր միայն բառս Եղուա։ որոց
տառք ունեին զնմանութիւն Առեսրոպեան տառից։ Յայսոլիսի
վեր ’ի վերոյնշանաց կարողանայր ամենայն ոք ինքնին երեւակայել
զնախկին տաճարին զմեծագործութիւն։ և ո՞ր սիրտ հայրե-
նասէր ոչ անիծանէր զձեռն՝ որ յանդզնեցաւ մխիլ ’ի կոր-
ծանումն այսպիսի հոյակապ շինութեան... Եւաղ Հայաստան,
զո՞րպիսիս ոչ կրեցեր դու զրկանս։ — Ի հիմունս և յոյլ Փը-
լուածս տաճարին՝ որպէս և Ճարտարապեան հաւաստէր, նշմա-
րիւր նշան երիցս շինութեան եկեղեցւոյն։ երեւէր և որմն մատ-

բան՝ զոր կառոյց Աշական արքայ՝ ի վերայ տապանին՝ ի գըտանիլ նշխարացն։ Եկամուտնիւթքն բարդեալք քան զյատակըն հնդիւ կանգնով չափ՝ երեւի թէ՝ ի քայքայմանէ եկեղեցւոյն և յողողմանց ջուրց հեղեղաց էին։ նիւթքն՝ ի ներքոյ դիղացեալք երկու կանգնով չափ՝ էին հողախառն ածուխ, աւազ և փշրեալ քարինք, ի վերայ սոցա՝ աւազ կանգնաչափ իրքե հող հաստատուն, ի վերայ սորա՝ հողախառն փշրանք քարանց և աղբ անամնոց։

Այնչ դեռ օրն երեկոյանայր, և ժողովուրդ բազում խրանեալ զվայրան զննէին, ձայն ետուն, թէ ահա զայ Արբազան Եռաջնորդն (յորոյ՝ ի դէմս երդեալ էր՝ ի ճանապարհին՝ ի լուր բազմութեան երգս՝ չափմամբ խորհրդաւոր բանից՝ Գրիգոր գիտնական քահանայն։) Հասեալ ուրեմն Արբազան Երբեկիսկոպոսին՝ արարնախատօնակ գիւտի նշխարաց Արբոյն Գրիգորիսի, և ապա հսկումն գիշերային։ Օտյն գիշեր բազմութիւն Հայկակն ժողովրդեան՝ ի միջի բերդին և շուրջ զնովախորան հարեալ օթագայեցաւ, և՝ ի բազմութենէ լուսոյ ճրագացն և խարուկացն վառելոց՝ չքնաղ իմն տեսարան Հայկական քաղաքի յանդիման աչաց կացուցանէր։ սիրտ զզայուն զուարձանայր՝ տեսեալ զժողովուրդն Հայոց միաշունչ և սրտեռանդն գիմեալ, որով յուշ բերէր զբանակին Աշականայ առ առաջին գիւտիւ նշխարացն։ և թէպէտ ձորն Եմարասայ զնորայն ժամանակի զբաղդ վայելեաց այն գիշեր։ բայց, աւաղ, զի Աշական չէր՝ ի միջի։ Եռ վաղիւն Երին Արբազնութիւնն օծեալ զսեղանն պատարագի՝ ետմատուցանել զսուրբ պատարագն՝ ի գոհուի ամենակալին Եստուծոյ։ ապա՝ ի բաց առեալ զկնիք տապանին՝ մեղմով իմն ետ հրել փոքր ինչ յարեւելս կոյս ըդհերձհերձեալ կափարիչ տապանին, յորում կայր նշխար Արբոյն՝ ի մէջ սակաւ ինչ հողոյ։ և առեալ անտի ահիւ և արտասուօք զման նշխարաց սուրբ զազաթանն՝ ի լրումն փափա-

գանաց ջերմեռանդն բազմութեան, ետ կրկին հրել զկափարին յառաջին տեղի և ամրապնդել. և զնշխարսն բազմեցոց
՚ի գիրկս քահանայի յազնիւ սկտեղ ոսկէնկար շղաշատեռիւ
սքօղեալ, յոր արտասուաթոր ինդութեամբ մերձեցեալ՝ համ-
բուրեաց զնշխարն ամենայն բազմութիւնն: Եյլ յայնժամ տա-
րօրինակ էր բուրումն ազնիւ անուշահոտութեանն, և թէպէտ
առ ժամն լցեալ կայր վայրն նեղանձուկ՝ անուշահոտութեամբ
ինկոց և կնդրկաց բուրելոց ՚ի բուրվառաց, այլ զմայլեցան
ամենեքեան յայն անընդել ազնիւ բուրմանէ անուշահոտու-
թեան սրբոյ նշխարին: Գուցէ երկմտէր ոք ընդ ստուգութիւն
անուշահոտութեանն առ Առաջականաւ եղելոյ՝ ըստ պատմու-
թեան, այլ զայն մեք մերովք իսկ հոտոտելեօք ստուգելով,
և առաւել յոյժ ՚ի հիացումն կրթելով՝ փառս միոյն Աստուծոյ
վերառաքեցաք, որ պսակէ զսուրբս իւր արժանաւոր պարզե-
ւօք ՚ի ողայծառութիւն Հայաստանեայց սրբաշնորհ եկեղեցւոյ:

«Օկնի ամրացուցանելոյ զտապանն Արբազան Երշին՝ ե-
լեալ յԱմարասայ ամենայն բազմութեամբ՝ եկն ՚ի Շուշի, ուր
ջերմեռանդն բազմութեան ելեալ ընդ առաջ՝ հանգուցին ըզ-
սուրբ նշխարն յիւրաքանչիւրում աւուր ՚ի միում միում յե-
կեղեցեաց քաղաքիս՝ յոր զցայդ և զցերեկ անդադար յաճա-
խեալ արանց և կանանց առատանային ուխտագնաց. ապա յետ
հնդից աւուրց և զմասն՝ ՚ի սուրբ նշխարացն տուեալ միաբանից՝
առաքեաց յԱմարաս՝ ՚ի լրումն փափագանաց գիւղականաց ուխ-
տագնաց յաճախելոց: Յետ ամսոց ինչ Արբազան Առաջնորդն
կրկին գնացեալ յԱմարաս, ետ կոփել նոր կափարիչ նման
առաջնոյն. և առեալ զհինն՝ որ ՚ի բազում մասունս էր հեր-
ձեալ, զնորն ՚ի տեղի նորա ամրապնդեաց ՚ի վերայ տապա-
նին. ուր առաջի բազմութեան տեսին՝ զի զթաթս զոյդ ոտից
և ձեռաց՝ ընդ նմին և զնշխարս բազկաց և ծղեաց առեալ էր
Առաջական՝ յարմարեալ զմնացեալ մասունս՝ ՚ի տապանի յիւ-

բաքանչիւրում տեղւոջ, և զմանը մասունս զետեղեալ առ
գաղաթամբ։ Ապա այնուհետեւ ձեռն՝ ի դործ արկին նորոյ շի-
նութեան եկեղեցւոյն։

— 62 —

ՅՈՒՆՈՅՈՒԹԵԱՅ

¹ Առաջին լուսաւորիչ՝ յորմէ մուտ կալաւ քրիստոնեութիւն յԱղուանս, եր
Սուրբն Եղիշէ, մինն յեօթանասնից, կամ ըստ ոմանց՝ աշակերտ Թաղեոսի առաքե-
լցն՝ ձեռնադրեալ յԵրուսաղէմ՝ ի Յակոբայ Տեառն-եղբօրէ ՚ի քարոզութիւն և
՚ի Հայրապետութիւն Աղուանից։

² Փայտակարան է ՚ի Հարաւոյ Երասխայ՝ որ այժմ Ղարատաղ կոչի, յորում
են հին քաղաքատեղիք, այժմ Շհաբէտահ կամ Շհաբէտէ կոչեցեալք՝ ի ստորասոս լե-
րանց հարաւայնոց։ Են և բերդորայք աւերակք մերձ յԵրասխ։

³ Զնահատակութիւն Սրբոյն Գրիգորիսի Համարեցաք՝ ի պատմութեանս ՚ի գըր-
գըռութենէ Շաղհոյ լեալ, ըստ որում աւանդութիւն էր Կաթողիկոսական տանն
Աղուանից, և բազումք լրւեալ՝ ի Ղաղարայ ումեմնէ՝ ի նօտարէ նոցին (որ և վասն
պարսկերէնադիտութեանն Մուլլայ կոչիւր,) պատմեցին մեզ զդոյն։ Զայդ աւանդութիւն
Համաձայն դատեալ Հանդամանաց ժամանակին և ազգային պատմութեանց՝ եղաք
թեութեամբ։

⁴ Երանելի Ռւռնայր ծերունի արքայն Աղուանից՝ որ եկեալ զօրօքն Հանդերձ
՚ի Հայաստան՝ մկրտեցաւ՝ ի մեծէն Գրիգորէ, ՚ի ժամանակս կաթողիկոսութեան Գրի-
գորիսի վախճանեալ էր. և չէ պարտ շփոթել ընդ այն Ռւռնայր՝ որ յետոյ խո-
ցեցաւ՝ ի Մուշեղայ Մամիկոնեան՝ ի պատերազմին Զիրաւայ։

⁵ Դիլոֆայր՝ երկայնաձիոլ լեառն Արցախ աշխարհիս. այժմ Հարաւային ծայրն
միայն կոչի Դիլոֆայր, որ պարսպետ ուխտատեղի է։ Ի շրջակայս սորա գտանին
և բազում հիմունք շինութեան քայքայեալք՝ ի վաղուց։ Պատճառ անուանակոչու-
թեանս առեալ է՝ ի դիլակոյտ դիականց որդւոցն Աանեսանայ, և այլոց նահատակե-
լոց անդ։ Շուշի քաղաքս մեր կայ՝ ի պարս սոյն լերին, և հեռի է յուխտատեղւոյն
Դիլափայտու կիսօրեայ ճանապարհաւ։

⁶ Աշխարհ Զորոյ՝ և Լբեաց՝ է Հարաւային մասն լերին Կովկասու՝ յարեւմուտս Հարաւոյ
Դարբանդայ. սոքա ընդ իշխանութեամբ Կաթողիկոսաց՝ Աղուանից էին, և Համարէին
իբրև նիզակակիցք նոցա։

⁷ Դաւառն Չորտյ՝ է բերդն Դարբանդայ. և Չորտ կամ Ճորտ՝ այժմ՝ Շորտ կոչեցեալ
է՝ ի հիւսիսոյ նորին, յորոյ՝ ի սահմանս կայ բանակետդ զօրացն Ռուսաց։

⁸ Յոմանս աշխարհացոյց տախտակս հնոյն Հայաստանի տեղափոխեալ են զԱրցակ
աշխարհ՝ ի հիւսիսային սահմանածայրո Ռուսիոյ և Արցախայ՝ զիսկ Արցախն տուեալ

Սիւնեաց. վասն որոյ և զվանս Ամարասայ և գանձասարու փոխադրեալ են 'ի վեր անդր. այլ որպէս վերոյիշեալ վանքն, նոյն և բաղում վանօրէք, գետք, բերդորէք, և լերինք որք գտանին յերկրիս Ղարապաղու. և անուանքն որք դոյզն ինչ աղաւաղութեամբ պահին առ մեզ, սասուգեն զվայրն Արցախայ 'ի մերումն երկրի լինել: Զայսմանէ գրեսցուք 'ի դիալող ժամու:

⁹ Ասան Ամարասայ բնակեալ շուրջ զեկեղեցեաւն առ նախնեւք: Չերեին այժմ հետք նորին: Եկեղեցին կայ միայն հեռի 'ի քաղաքէն 25 վերսաչափ յարեւելս կոյս, 'ի հայոց այժմ կոչեցեալ Մարտոսու Հոնի կամ սուրբ Գրիգորիս, և շրջակայք նորին կոչին Մարտոսու Յոր. և Հարանդ գաւառ նորին այժմ կոչի Ալարանդ: Ի պաշտօնական գրութիւնս Ռուսաց, որպէս յանուան տեղւոյն՝ նոյն և յանուանս այլոց տեղեաց աշխարհիս, տաճկերէն կոչմամբ վարեն. և Տաճիկը զվանսն Ամարասայ Աղջլան կոչեն, այսինքն է՝ սովորակ ողաց, և զձորադիր շրջակայս նորին՝ Աղջլան ուերեսէ: Եւ պատճառ այսպիսի անուանակոչութեան է՝ զի հրաշագործ Սուրբն միշտ երևի մանկատեսիլ և սպիտակազգեստ՝ ահ ածեալ 'ի շրջակայ բնակիչս երկրին:

¹⁰ Գիս այժմ Քիլ կոչեցեալ՝ է գիւղ թուրքաբնակ՝ մերձ Կուխոյ քաղաքին՝ 'ի հիւսիսոյ նորին. և մայր եկեղեցին Աղուանից՝ այժմ Եղիլս առագետաւլ՝ կայ անդ ցայսօր կանգուն և անեղծ, և մեծ ուխտատեղի է քրիստոնէից: Զայս եկեղեցի կառոյց ինքն Եղիշե տուաքեալն յԱղուանս, և առաջինն ինքն պատարագեաց 'ի նմա. այլ վասն զի 'ի մասանց Սրբոյս գտանին և յայլ եկեղեցիս, նոքին ևս անուանեալ կոչենն Եղիլս առագետաւլ. այլ զայսմանէ այլուր: Բնակիչք գեղջս Քիշու՝ իսկ աղուանք՝ կրօնափոխեալք են բռնութեամբ 'ի մահմետականութիւն 'ի ժամանակս Արարացւոց և Ծահ Սուլթան Հիւսէինի արքային Պարսից. բայց զմայր եկեղեցին իւրեանց երկիւցիւ պատուեն ցայժմ, և անվեաս պահեալ են:

¹¹ զՈւշին՝ ընդ որ շոքաւ բանակ Աւաշականայ, փոքր ինչ դժուարութեամբ կարացի յարմարել՝ վասն անհնարին կերպարանափոխութեան երկրիս, զի տեղի Դուդական աւանին և Արժան գեղջ այժմ անյայտ են. և եթե Արժան գիւղ զայժմեան Աշանն համարիցիմք, նախ խոտորի ընթացք բանակին յուղիղ ճանապարհէ, և երկրորդ՝ չդիպի գետակին Ամարասայ՝ առ 'ի անցանել, զի Աշան 'ի հիւսիսոյ, և գետակն՝ 'ի հարաւոյ Ամարասայ եկեղեցւոյն կան. վասն որոյ պարտ է մատճել զայնպիսի իմն ճանապարհ՝ որ 'ի հարաւոյ եկեալ ընդ գետակն անցանիցէ:

Եթէ զտեղի Դուդակին աւանի որոշակի չդիպիցեմք, բայց զայս գիտեմք, զի երան Դրդու՝ այժմ Թաթար՝ կոչեցեալ գետով 'ի հիւսիսոյ Ամարասայ: Ապա ուրեմն համարելի է՝ թէ 'ի Դուդականէ ելեալ ուղիղ ճանապարհաւ դաշտին՝ դայ յԱրժան. որ յայնժամ կայր 'ի դաշտին, և անտի անցեալ ընդ Քարուէջն ադարակ՝ հտսանի 'ի վերջ կոյս այգեստանեայց Ամարասու. և վասն զի խիտ առ խիտ այգեստանեայք աւանին արդել եղեն նմա ուղղակի դիմել յեկեղեցին, և գետակին բաժանեալ յայշիս՝ սպառեալ եր, դիւրին եղեւ բանակին 'ի ներքուստ այգեստանեայց անցանել 'ի հարաւ կոյս, և ապա յետո դարձեալ ընդ մէջ շինին, և անցեալ ընդ գետակն՝ իշանել յեկեղեցին:


Եւ ոչինչ ընդդեմ է կարծել թէ՝ Արժան գիւղ՝ որ յայնժամ՝ ի գաշտին կայր, աեղափոխեալ իցէ՝ ի դժուարուտա լերանց այժմեան Աշնի՝ յահէ թշնամեաց և աւազառութեան:

12 Ընդ Աաշականայ էր և Խոչքորիկ իշխան կողմանցն՝ ուր նահատակեցաւ Սուրբ Գրիգորիս. Հաւանելի է թէ նա ևս առեալ՝ ի մասանցն՝ տարեալ եղ՝ ի տեղի նահատակութեանն՝ կառուցեալ մատուռն՝ ի վերայ, որ և կայ կանդուն մինչեւ ցայսօր:

13 Ընդ այժմեան Ղարապաղաւ պարունակին մասունք հին նահանգացն Հայոց Սիւնեաց, Արցախայ և Ռւտեացւոց:

14 Սոյն այս Տէր Գէորգ Արբաղան Արհիելիսկոպոս եկեալ և՝ ի 1854 ամի ի քաղաքս յանձնարաբական դործովք Տեառն Ներսիսի Կաթուղիկոսի, դիակեցաւ վախճանի Մետրապոլին Տեառն Բաղդասարայ: Յետ փառաւորապէս կատարելոյ զհանդէս օծման և յուղարկաւորութեան նորին, յայց ել և Ամարասու, վանիցն և տեսեալ զաւերակութիւն և զանշքութիւն վայրացն՝ ուխտեաց Աստուծոյ ջան դնել՝ որքան՝ ի կարի իցէ՝ պայծառացուցանել զվանսն՝ ի պարծանա ազգիս:

15 Զձեռնտուան և զհանգամանս նորոյ շինութեան եկեղեցւոյն թողաք մանրամասն գրել յաւարտիլ շինութեանն:



«Ազգային գրադարան



NL0241725

